ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 25» ապրիլի 2024 թվականի N:167- Ա ք.Գյումրի

«ԱՆԻ-ՊԵՄԶԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ
«ԱՂԻՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ
ՄԻԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի N 260-Ն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Անի-Պեմզայի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ վիճարկվող) պարտավորությունների՝ «Աղինի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անցնելու վերաբերյալ փոխանցման ակտը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել «Անի-Պեմզայի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Աղինի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միացման կարգն ու պայմանները հետևյալ կերպ.

1) «Անի-Պեմզայի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը և «Աղինի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը համարվում են միացման ձևով վերակազմակերպված, միացման արդյունքում «Անի-Պեմզայի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության դադարման պետական գրանցման պահից:
2) Իրավասու մարմնի կողմից միացման պետական գրանցումից հետո մեկամսյա ժամկետում «Աղինի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային

կազմակերպությունը ընդունում է «Անի-Պեմզայի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության առկա հիմնական և դեբիտորական, կրեդիտորական պարտքերը, հաշվարկները, այլ գույքային իրավունքները՝ համաձայն հաստատված փոխանցման ակտի: «Աղինի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը դառնում է «Անի-Պեմզայի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության լիարժեք իրավահաջորդը:

3. Հաստատել «Աղինի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունում հետևյալ փոփոխությունը՝ համաձայն հավելված 2-ի.

1) Կանոնադրության 1 կետի վերջում ավելացնել հետևյալ պարբերությունը.

««Աղինի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Անի-Պեմզայի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համար՝ 48.210.872756, ՀՎՀՀ՝ 06102743, գտնվելու վայրի հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք Անիպեմզա բնակավայր 1, շ. 1, 2903) լիարժեք իրավահաջորդը՝ միացման եղանակով վերակազմակերպման արդյունքում՝ փոխանցման ակտին համապատասխան»:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է